

Լեռնիկ Նահապետի Պետրոսյան

*Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների
ակադեմիայի ակադեմիկոս,
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1959 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ Սյունիքի մարզի Վերին Խոտանան գյուղում: Ամուսնացած է: Ունի երկու որդի:

Կրթությունը

Սկզբնական կրթությունը ստացել է Վերին Խոտանան գյուղի ութամյա դպրոցում: 1976 թվականին ավարտել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետը:

1981 թվականին գերազանցությամբ ավարտել է համալսարանը՝ ստանալով «ֆիզիկոսի (քվանտային էլեկտրոնիկա)» որակավորում:

Աշխատանքային գործունեությունը

1981-83թթ. աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ավագ լաբորանտ:

1983-86թթ. աշխատել է Կապանի քաղժողկրթբաժնում որպես մեթոդիստ (համատեղությամբ՝ ԵրՊԻ Կապանի ՈՒԽԿ-ի դասախոս):

1986 թվականին նշանակվել է Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքների գծով, իսկ 1988 թվականից՝ նույն դպրոցի տնօրեն:

1996-97թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես Կրթության բաժնի գլխավոր մասնագետ (համատեղությամբ՝ ֆիզիկայի ուսուցիչ):

1997 թվականին նշանակվել է ՀՀ ԿԳՆ Սյունիքի մարզային-տարածքային տեսչության պետ:

1998-2000թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես աշխատակազմի Կրթության վարչության պետի տեղակալ:

2000-2003թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կապանի հենակետային վարժարանի տնօրեն:

2003-2006թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (համատեղությամբ՝ ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղի դասախոս):

2006/2007 ուսումնական տարում աշխատել է ՀՀ ԿԳՆ Կապանի վարժարանում որպես ֆիզիկայի ուսուցիչ:

2007 թվականին ընտրվել և մինչև 2012 թվականն աշխատել է ՀՀ ԿԳՆ Կապանի վարժարանի (վերակազմակերպումից հետո՝ Կապանի թիվ 2 ավագ դպրոցի) տնօրեն:

2012-2016թթ. աշխատել է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի (2015 թվականին՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի) տնօրենի պաշտոնակատար (համատեղությամբ նույն մասնաճյուղի Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի պրոֆեսոր):

2016 թվականից առ այսօր աշխատում է որպես ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի պրոֆեսոր:

2022 թվականի դեկտեմբերի 13-ից նշանակվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար:

Գիտական և ուսումնամեթոդական գործունեությունը

Հեղինակ է հրատարակված 67 գիտական և գիտամեթոդական հոդվածների, 2 դասագրքերի և 4 ուսումնական ձեռնարկների: